

ՁԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	15
Մասնամսեայ	8

Սակերիկայի համար	3
Տարեկան	4.50
Վեցամսեայ	2.50

Իսկանդրական տար աստիկն երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակերիկ է. երեսին աւելի սակերիկներու համար 20 0/0 զեղչ կը ըլլայ:

ՇԱՐՅՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՄԻՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՅՈՒՄ ՕՐԱԲԸ

Նախկին ևր զրամ զ'կիչ ԽՈՐԱԳՐՈՒՅԻՆ ԵՒ ՏԱՐԻ

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձեռք
(20 ՍԱԿԵՐԻԿ)
Պուշկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱԿԵՐԻԿ)

Գրութիւնք և՛ չեն տրուիր

ՇԱՐՅՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԺՆԵՎԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր այն բաժանորդներէն եւ Գործակալներէն, որոնք դեռ իրենց հաշիւները չեն մաքրած, կը խնդրուի որ փութան վճարել իրենց պարտքերը: Անոնք պէտք է գիտնան, որ պարտաճանաչութիւնը աքաբիտութիւն մըն է:

Գարսկաստանի մեր բաժանորդները կարող են առասպալան թղթադրամ զոկել ապառիւսագրուած նամակներու մէջ, 1 րուպլին 2 Փր. 60 սնթ. հաշուով:

Շարժումի բաժանորդ գրուող բաժանագիրք պէտք է կանխիկ վճարել: Բայց մենք կ'ըստանանք ապրուարեան րոտանց բաժանագիր, իր հասցիին հետ բաժանագիրը չը զրկողներու գրումները կը մնան անհետեւանք:

ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՏՈՒՅ ՍԷՋ

I

Ամէն հայ հպարտութեամբ գիտեց Ռուսահայաստանի փառաւոր զիմագրութիւնները և բողոքի շարժումները: Ասոնք ի հարկէ ունէին իրենց բնական պատճառները, որոնց վրայ մենք ժամանակին երկար կանգ առինք: Հիմա գիտենք մեր շուրջը և տեսնենք թէ մեծածաւալ այդ երկրի մէջ ի՞նչ կը կատարուի, մեզ բաղդակից ազգերէ ի՞նչ գիրք բռնած են, ի՞նչ կը մտածեն նոյնիսկ իրենք՝ Ռուսերը, տեսնենք թէ կո՞յ արդեօք յեղափոխութեան համար պատրաստ հող:

Առանց այլեւ այլի կարող ենք ըսել թէ Ռուսիա այժմ կը ներկայացնէ հնոց մը, որու մէջ բոցավառուած է յեղափոխութեան կրակը և որըստորէ պիտի լառաջացնէ նորանոր հրդեհներ: Օրինակ երեկուան հայկ. ուժեղ յեղափոխութիւնը, որմէ Պէյզէն ինք սարսափ զգաց և Գալիցիոյն հեռագրեց, որ յետաձգէ եկեղ. կալուածներու գրաւումը եթէ

զիմագրութիւնը զօրեղ է: Վերջինս յամառեցաւ, բայց և տեսաւ յեղափոխութեան գոյնը ին ուժը:

Ռուսիոյ մէջ կայ յեղափոխութեան աճման համար ուժեղագուրարտ հողը: Ի՞նչու կը բացատրուի այս:—Նոյնիսկ իրեն՝ ուսկառավարութեան վարժուեցող, անոր հետեւած ներքին և արտաքին քաղաքականութեամբ:

Յարի խորհրդատուները փոխանակ ժամանակի պահանջին համեմատ երկրին մէջ բարենորոգումներ մտցնելու՝ իրենց ներքին քաղաքականութեան համար զրած են երկու նպատակ, երկուքն ալ յարմարուած սեփական հպատակները գէպի ապստամբութիւն մղելու և քաղաքակիրթ աշխարհի հակակրօթիւնը ու ցասմունքը իր վրայ հրաւիրելու:

«Օտար և ոչ-ուղղափառ տարբերութիւն և ուսուցում» և «հալածանք» ուղղուած երկրի ազատ խորհող ու ընթերցող պահանջող տարբերութիւնը: Ահա ներքին գործոց նախարար Պէյզէի և իր վարչութեան երկու զլիւստր նպատակները, զորոճող ընդհատակի համար նա իր տրամագրութեան տակ ունի ստիկաններու և կողակներու ստուար բանակ մը և ամբողջ յետադիմական մամուլը: Ոստիկանութեան և լրտեսներու հալածանքէն ազատ չէ Ռուսիոյ մէջ ոչ մի գրասակարգ, ոչ մի համայնք, ոչ մի ընկերութիւն, ոչ մի մարդ:

Արդիւ՞նք, այդքանքը անխուսափելի է և հեռատեսելու պէտք չկայ, այն է՝ այդ բոլոր տարբերութեան ծայրահեղ զժգոհութիւնը և բողոքը, որու ձայնը օրըստօրէ աւելի բարձր կը հնչէ: Դժգոհ է և շարունակական եռումի մէջ կը գտնուի համայն ուսկառավարած զաւր, այսինքն ուսկան ինտելիգենցիան, որով և կը բացատրուի ամէն տարի կրկնուող համաբարձրական խռովութիւնները: 60ական թուականներու ուս յեղափոխական

ուսանողը չէր հասկցուէր ուսկառավարին և ուս բանտերն, նոյնիսկ կը հալածուէր անոնց կողմէ: Այսօր զժգոհութեան ու բողոքի կրակը ինկած է և ուսկառավարն ու բանտերական դասակարգը, որուն մէջ վաղուց մտած է լիբերալիզմը:

Ի՞նչ կընէ Պէյզէ այս բոլորին առջեւը առնելու համար: Բան մը չընելէ զատ ան կուրօքէն կը գիմէ բողոքովին բացասական միջոցներու, կը ձերբակալէ, կը բանտարկէ, կաքորէ, կը կոտորէ, կը կախէ, իբր թէ չարիքին արմատը քանի մը անհատներու քմահաճոյքէն կախուած ըլլար և ոչ թէ պետական ընդհանուր կազմէն:

Հիմա մենք կարող ենք ըսել թէ Ռուսիոյ մէջ յեղափոխութեան համար պարարտ հող պատրաստողը նոյնինքն ուս կառավարութիւնն է: Ռուս ոստիկանութիւնը և յետադիմական մամուլը կընեն յեղափոխութեան ինպատ առաջին և ամենաազդու պրօպագանդը, իր հպատակներուն ատեն ի գործնելով «բարեխնամ կառավարութիւնը» իր սմբողջ կողմով—Յարէն սկսած միւշու ամենայն տիպի չիւնդիկը:

Եղան մեր մէջ մարդիկ, որոնք առասպալական շարժումները անխոհեմութիւն սեպիցին: Մենք փոքր ժողովուրդ մը՝ ի՞նչ կարող ենք ընել հիւս. հզօր կայսրութեան դէմ: Ռուսը եթէ ուզէ ամէն հայու տան առջեւ կը տնկէ կախազան մը: Բայց ինչպէս կը տեսնենք այդ վախը անտեղի է: Մենք մինակ չենք: Յեղափոխութեան մէջ է ամբողջ Ռուսիան, և եթէ Յարի կառավարութիւնը իր ընդարձակածաւալ երկրի մէջ ծայրէն միւս ծայրը իւրաքանչիւր տան առջեւ կախազաններ անկել ուզէ, այդ կախազաններով ինքը՝ բռնակալութիւնն է, որ պիտի խեղդուի առաջին անգամ և ոչ թէ իրենց աղաւթութեան համար մարտնչող ժողովուրդները: Մարգարէտնի

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Տիկին Տօք. Փաշտեանի նախածնունդութեամբ Ալեքսանտրիոյ մէջ կազմուած է «Կարմիր Խաչի Տիկնանց միութիւն»-ը: Ընթողներով Ալեքսանտրիոյ հայ կանանց այս զեղեցիկ ձեռնարկը բոլոր սրտէ կը ցանկանք յաջողութիւն:

Ասով արտասահմանի հայերս կուենանք կարմիր Խաչի քանի մը միութիւններ: Մենք խորհուրդ կ'ուսայինք զանազան տեղերու կարմիր Խաչի ընկերութիւններուն իրարու հետ հաստատել կապեր և կազմել ընդհ. միութիւն մը ոչ ալկ. կարմիր Խաչ՝ անուան տակ և այսպէս մըտնել միջազգային կարմիր Խաչի՝ ներկա կազմակերպութեան մէջ՝ ներկայացնելով ժընէզի «Միջազգային կարմիր Խաչի» Բիւրօին գրաւոր առաջարկ:

Մենք յուսով ենք առաջարկն չի մերժուի և «Հայկ. կարմիր Խաչ»ը կը կարողանայ Միջազգային մարգասիրական այդ հաստատութիւնէն մեծապէս օգտուիլ ու աւելի ուժեղ կազմակերպուի: Հայկ. կարմիր Խաչի միտքը շատ զովելի է ու օգտակար, պէտք է ամեն տեղի հայեր հետեւին եղած օրինակներուն և նոյնպէս այս ուղղութեամբ կազմակերպուին: Մանաւանդ հայ կիներ ու օրիորդը կոչուած են այսպէս լաւագոյն գերը խաղալու:

Ահա՛ ստորեւ Ալեքսանտրիոյ հայ տիկնանց միութեան կանոնադրը:

ՆՊԱՏԱԿ. — Միութեան նպատակն է օգնել, առանց կուսակցական խտրութեան, հայ քաղաքական բանտարկեալներու. ինչպէս նաեւ յեղափոխական սպարէզի մէջ փաստուած, վիրաւորուած հայրենակիցներու:

ՀԱՍՈՅԹԻ ՄԻՋՈՆՆԵՐ. — Միութիւնն չունենար պարբերական բաժնեգիր վճարող անդամներ. անոր հասոյթի ազդուներն են հանգանակութիւն, վիճակահանութիւն, պարբերական նուէրներ, երեկոյթներ, հանդէսներ, զազար, եւն:

Կ) ՁՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ. — Միութեանը գործող մարմինը բաղկացած է 7 անդամներից:

ՀԱՇՎԻՑՈՒՄՆԵՐ. — Միութեանը իր ստացած նպաստները հաշիւը պարբերաբար կը հրատարակէ ձրի ընդունող թերթերու մէջ:

Տարին անգամ մը ելքումուտքի ընդհանուր հաշիւը կը ներկայացնէ հասարակութեան անդամներն պաշտօնող մը:

Միութեան Դիւանի Առնականութիւնը հասարակութեան առջակ'ըւայ Միութեան ներկայացուցիչը:

Միութեան ունիւ և իր ներքին կանոնադրը:

ԱՏՃԵՆՊԵՏ

Տիկ. Վ. Կ. Փաշանեան-Խան

ՃԱՐԼԱՏԱՆՆԵՐ

Վարդի քով կողք կողքի կեցած է և փուշը: Ազատութեան քաջարի զինուորին և յեղ. մաքուր գործիչին կողքին կեցած է և շահախնդիր հակայնդափոխականը, մեծախօս ու տգէտ շարլատանը: Ազգերու ազատագրական շրջաններու մէջ այս երեւոյթը գրեթէ անխուսափելի է: Իսոյց կարելի է միթէ հոսանքին դէմ լողալ, հոսանք, որ ստեղծուած է կեանքի և իրականութեան մեր առջեւ գրած անողորմ պահանջներով և որ իր մէջ առնելով բոլոր կենսունակ ուժերը անվթար կը շարունակէ իր ընթացքը: Սակայն կուրուսթիւնը մէկ մը բռնաւորներուն տրուած յատկութիւն է, մէկ մըն ալ բէսկոյիտներ ու յետադիմական տարրերու: Այս սեռակ ուղիղի հիւանդ շարլատաններ էին, որ կիրակի ունեցեր են ժողով մը, իրենց խօսքով միութիւն ցանկացուներ, բայց իրականութեան մէջ նոյնիսկ այդ գաղափարի դասարիքները: Ինչ է այսպէս կոչուած միութեանականներու—եթէ իսկապէս որոշ լրջութիւն ներկայացնող այդօրինակ մարդիկ կան—նպատակը Յեղ. կուսակցութիւններու մէջ միջնորդողի դեր խաղալ և զանոնք իրարու մօտ բերել, — պիտի ըսեն Տեղ. Իսոյց ատոր համար պէտք է առաջին անպայման կերպով վայելել յեղափոխական գործիչներու և մարմիններու վստահութիւնը, անոնց ցոյց տալ անկեղծութիւն, մաքուր միջոցներով հաստատել ընկերակից կապեր, խնդիրը դարձնել լուրջ ու սուսմասիրութեան նիւթ, զայն լուսաբանել իր ամէն կողմերով: Լրացուցե՞ր են միութիւն պոստացողները այս պայմանները: Ո՛չ, հազար անգամ ոչ: Ընդհակառակը անոնք դացեր են բոլորովին հակառակ ուղիով և դեռ իրենց կիրակնօրեայ ժողովին մէջ անպատկառ կերպով հայհոյանքներ են թափեր գոր:

ժող յեղ. կուսակցութեանց հասցէին, ջանացեր են ճերմակը սև ներկայացնելով արատ քսել անձնուէր և մաքուր գործիչներու ճակատին... Այս աստիճան անհեթեթութեան և հակասութեան մէջ իյնալու համար թրքական ուղեգրները անգամ կանգ կառնեն:

Ահա այս մարդիկն են, որ կիրակի օր ժողով են կազմեր, քարոզներ են խօսեր: Այո՛, քարոզներ, բայց չա՛ն քարոզներ... Համաձայն ենք, բայց ի՞նչ կը մտածէք Հմայիակ Խուչպուլեանի մասին կը հարցնէ մեզ երբեմն այս ու այն, մի՞թէ ան ալ կեղծաւոր է, մի՞թէ ան ալ անմաքուր է, Խուչպուլեանը, երիկուան յեղափոխականը: Գլուխը քարին այդ մարդուն ալ, կարող է աստուծոյ հրեշտակ ըլլալու բայց քանի որ հակայնդափոխական տարրերու մէջ է ինկած, ուրեմն և ինքզինքը արժանի համարած է այդ մարդոց հետ մէկ կարգի մէջ դասաորու իր և նոյն Խուչպուլեանն է, որ երէկուան իր պաշտած դրօշին ու ծրագրին այսօր անհատաբար դառնալով յեղ. մարդու մը ոչ—ներելի միջոցներով կը դատաւետէ ու կը հարուածէ թէ գրօշ թէ ծրագրի: Նոյն Խուչպուլեանն է, որ իր այս ընթացքը շարունակելով հանդերձ կը պահանջէ սրբել «Հնչակ»ի մէջ իր ճակտին դրօշմուտ արատը, շնայելով որ իր ներկայ ընթացքը իրեն համար աւելի արատաբար է քան եղածը:

Խուչպուլեան հնչ ներկայացուցչէն արդարութիւն կը սպասէ եղեր: Ո՛չ, ան կարող էր միայն ներում սպասել: Եւ մենք հաստատ համոզուած ենք Պ. ներկայացուցչի անկեղծութեան վերայ, ան կը ներէր յանցաւոր ընկերով, բայց ե՞րբ զե՛սց այդ ընկերը իր վիշտը ներ այսօրուց չին առնել թափելու ու անկէ իր գարտին գարման խնդրելու: Պ. Խուչպուլեան չըրաւ այն, ինչ որ յեղ. անկեղծ ընկեր մը պիտի ընէր առանց այլևայլի... Անցնինք...

Մարգարէտեմի

Միութեան Դիւանի Առնականութիւնը հասարակութեան առջակ'ըւայ Միութեան ներկայացուցիչը:

Միութեան ունիւ և իր ներքին կանոնադրը:

ԱՏՃԵՆՊԵՏ

Տիկ. Վ. Կ. Փաշանեան-Խան

ՓՈՐՈՒ ԲԱՅՑ ԱՐԺԷՔՍՈՐ

Սրանից երեք-չորս ամիսներ առաջ, 1903ի վերջերում, Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրօն տպագրեց Ե. Ա. Կուրուսթիւնի նամակները մասնաւոր հրատարակութեամբ: Մեր նրապատկից հետո լինելով «Կովկասեան վերքեր»-ի մասին քննադատական փորձ ընել այժմ, այն է՝ թէ ճշուած ու ուսակար թանութիւններին զոհ ամբողջ կովկասի վերքերը այնքան պարզ ու խոր ներկայացնող գիրքը աւելի մեծ օգտակարութեան մատուցած կը լինէր, այդ ցաւերին, շուտով գտնէ փոքր չափով սպեկանի կը դառնար, եթէ կարողանայինք նրան

մատչելի դարձնել եւ բուսական ընթերցող հասարակութեան:

Ինչպէս ասացինք, «Կովկասեան վերքեր»ը յաջողութեամբ, իրական փաստերի, վաւերաթղթերի ու ցուցմունքների վրայ հիմնուած, ամենապարզ, ինտենզիւ կերպով պատկերացնում են ընթերցողի առաջ ուսասանի բոլոր վերքերը: Հիւսիսեթոնականութեան սահմաններում գրանուող ամբողջ հայ ժողովրդի ցուտ կեանքը, նրա գոյութեան դէմ ծրագրած իրար դարմանները՝ սքողած «հայրանամ հողատարութեան», քաղաքակրթութեան ու «կարգապահութեան» սակ: Սակայն հայի համար դրանք, այդ փաստերը, այդքան էլ ապացուցիչ, ցոյցող ու ըմբոստացնող չեն իրանց նորութեամբ: Ո՛վ, ո՞ր հայը չի ճանաչում, ո՞ւմ ծանօթ չեն հայ-կեանքի տաճան պայմանները «քրիստոնէականի պաշտպան» Յարի տիրապետութեան սահմաններում: Ել կոյրերն էլ տեսան, խուլերն էլ լսեցին, քարերն էլ իմացան թէ քրիստոնէականի պաշտպանը հայ-քրիստոնէի դահլձն է այսօր, նրա գոյութեան ամենատարրական միջոցները թունաւորող, նրա սեփական ստացւածքը աւազակութեան ամենալիբեղանակով ձեռքբերելով իրողը:

Ինչ հարկ կայ ծանօթ փաստերը կրկնելու առանց այն էլ թարմ վերքերը փորձելու: Այժմ հնչ կեանքի ցաւերն են խօսում, աղաղակում բարձր... Ամսոյս Երն, Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտ. Բիւրօն ցրեց մի կողմ ոչ-ուսակարտակ հայերին, որպէս զի կալածական հարցը արդէ Լահէի միջազգային դատարանին: Հայ կեանքի ներկայ կրիստոնէական պայմանները, վերքերը պարտք են ծանրացնում ամեն անկեղծ հայի վրայ, մարդկային հոգի ու սիրտ կրող վրայ, անել այն՝ ինչ նա կարողէ անել տալ, այն՝ ինչ կը ներեն նրա սյծերը: Ետո կողմերից գրաւոր բողոքներ ուղարկուցին Սպիտակ արժէ հասցէին և խրատական նամակներ հայոց աղագորջ Հայրապետին, առաջինի աւազակութեան և երկրորդի անական ընդդիմադրութեան համար: Այժմ պահանջում են խօսքին միացնել գործ: Հարկաւոր է փոքր աշխատութիւն:

Այս պարագաներում նպատակայարմար ու նպաստաւոր էր թարգմանել Պ. Ա. Կուրուսթիւնի «Կովկասեան վերքեր»ը եւրոպական լեզուներով: Ֆրանսերէն, Անգլերէն և Գերմաներէն, կամ գրեթէ քրեանցից երկուսով, եթէ ամբողջական թարգմանութիւնը դժուար լինի—որովհետեւ հարկաւոր են որչափ միջոցներ դրան մաքուր, պէտք եղած կերպով հրատարակելու համար— այդ հանգամանքում ցանկալի էր գէթ գրքից առանցին նշանակութիւն ունեցող լուրջը սպոէին եւրոպական մասուրում, կամ անսնաւոր քրօշիւրներով: օրինակ՝ Ռուսացում, Տիպոնուսարը, Հայոց դպրոցներն ի վայելու մը, Յայրապետին, Գաղտնի վերջում: Փակ՝ ընկերներին Անգլի, Յեղ. Յեղ. Կաշաւի աշխարհում, Յեղ. Կաշաւի, Հայկական շարժումը, Գաղտնի վկայագիրներ, Գաղտնիական գողութիւն եւ այլն:

Մենք կարծում ենք, թէ Պ. Ա. Կուրուսթիւնի աշխատութեան թարգմանութիւնը ընդունելութիւն կը գտնէ եւրոպացի ընթերցողներին մէջ, այս պարզ պատճառով, որ նրա գրիչը էնքան յաջողութեամբ է պատկերացրել ռուս բիրօկրօսիայի, չին օմիլիկու-

թեան գործը, վարքը, բարքը: ասեւ վճիտ հայեւու մէջ ևս անսոււժ թոնակալ միապետութեան դահճային վերաբերմունքը հանդէպ յառաջադիմութեան ու կուրաուրաի ընդունակ մի ցեղի գալարումներին՝ թօթափելու իր ստրկական շղթաները և մարդկային կեանքի վրայ բարձրանալու: Այդ թարգմանութիւնը կրկնակի նշանակութիւն ունի այժմ երբ կալուածական հարցը առաջարկուած է Լահէի միջազգային դատարանի քննութեան:

Այս պարտքն էլ անշուշտ, ընկնում է հայ ինտելիգենցիայի վրայ առհասարակ, և Երուսալիմ հայոսանդերի միութեանն ժամանակաւորաբար: 18 Յունվար 1904

Էմիլ Եղարշեանց

Օ Ա Ս Ո Ւ Ն Ե Ր

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Կառավարութեան յոյսերը այս պատմութեանով կը փշուրուին: Անոր անել դուրսիւնը աւելի կը բարդուի—եթէ կ'իւր սկսէր իրեն ձեռնտու չէր, որովհետեւ երկու տեղ, Մալեգորձայի և Հայաստանի մէջ միաժամանակ կուրել այնքան հեշտ չէր եւ կարող էր անակնկալներու առաջնորդել, իսկ եթէ բացարձակապէս խոյս տար կուրէն իր վարկը կ'իյնար նոյն իսկ քիւրտ եւ թուրք ամբողջ աշխարհ: Ուրեմն կը մնար մի ելք, շահանակ ուրիշին ձեռքով հանել կրակէն: Այդպէս ալ փորձեց բայց անյաջող ելաւ փորձը Յուլիսի մէջ ուստի պատրուակի տակ, երկու անգամ քրդեր եւ երկու ոստիկաններ կը խրկին Անտոն լեւան փոքր գագաթը, որ սեր տղոց բռնած գագաթի ճիշդ դիմացը կ'իյնար, ուրկէ կըսկսին մէկ ժամ անընդհատ հրացան պարպել զէպի մերսնց դիրքերը: ասակայն հայ ֆէտային կարհամարիէ անոնց հրացանաձգութիւնը, մէկ գնդակ անգամ շարձակուրի մեր խմբի կողմէն: Քրդերը ու ոստիկանները ամօթահար ետ կը դառնան:

Սակայն կառավարութիւնը միջոցառել կը փնտռէր ռեւէ կերպով քրդերը առաջ քշել, անոնց միջոցով սկարացնէր ֆէտայի ուժը: Մէկ անգամ բազմանցի քրդերը կուրի կը բռնուին սէլամցիներու հետ, բայց վերջինները կը յաջողին հրացաններու որոտին տակ բազմանցիները ետ մղել ու այս միջադէպը վերջ կը գնէ քրդական առաջադաշնութիւն:

Օգոստոսի վերջերը «քէօպար» կը մեյնի զէպի Տիգրանակերտ, սակայն զօրքը կը մնայ իր տեղ հակառակ նախկին տարիներու սովորութեան, ուով քէօպարի մեկնելուն հետ միաժամանակ զօրքն ալ կը վերադառնար Մուշ:

Պարզ էր թէ, զօրքը բարի նպատակի համար չէր կեցած հոն, ու ասի կը ճշուէր Մուշ կառավարական շրջանէն եկած լուրերովը թէ զօրքը մտադիր է հայ գերդերը գրաւել նստիլ եւ ֆէտայիները թողնել լեւանութեան գագաթը: Բայց ներկայ ժամանակին մէջ իրաւունքը զօրաւորին է: Ֆէտայիները կը կանխեն կառավարութիւնը եւ անկէ առաջ կը գրանեն դիւրեւ կառավարութեան զօրքը թողնել վրաններու մէջ, ցուրտին, բուքին տակ:

Կառավարութիւնը երկու ոստիկ

կաններ կողմից ֆէտալները լըր-տեսիւն համար, սակայն առաջի լըր-տեսներու պէս կը ձեռքարկուին, իրտեսներէն մին քիւրդ, իսկ միւսը մշեցի հայ մըն էր որը յայտնի էր իր կեղտոտ անցեալով, կրպաններ հայր եւ անոր հրացանը կը յանցնեն քըր-բուն ու կրսեն «Տար այս հրացանը տուր Սալէն աղային, բոլ իրեն մենք կրպանները գաւաճանները, սակայն Սուլթանի զէնքը կը դարձնենք իրեն, որովհետեւ մենք կարիք չունինք մեր թշնամու զէնքին»։ Դողահար քիւրդը շնչառապա կը մեկնի ու եղելով իրեն կը պատէ իր սիրով։ Այս զէնքէն քիւր խոք կը մեկնի բանակը ու Սասունի գաղմագամ Սա-լէն աղան, հազարապետը եւ ոստի-կանները, որոնք կը բնակէին Տա-փըկ քրդական գիւղը, կը հաւաքեն իրենց ոտն ու գլուխ եւ շունչընին Մուշ կառնեն։

Մշոյ թիւրքերը Սալէնի փախուստը տեսնելով ծայրայեղ կը դրդուին, Բաղէշի կուսակալը կը փութայ Մուշի գրգռման առջեւ առնելու, սակայն թուրքերը անոր ալ շանսալով ուղ-ղակի կը հեռագրեն Բ. Դրան հետեւ-եալ իմաստով — «Եթէ կառավարութեան միջոցներ չեն ներքը արհեստով ձեռք բերուած հողերը պաշտպանելու եւ Սասունը յեղափոխականներուն կը թողուի, մենք իսլամներս պատրաստ ենք կեանքերին վրայ տալու»։

Վերջին եկած պատասխանը եղաւ, «Սասունի հայեր մաքրել, թողուած է գարնան»։ Ժողովուրդը զոհ այս պատասխանէն կը հանդարտի։ Այսօր ամբողջ Սասունը հայ ֆէ-տայիներու իշխանութեան տակն է, Ան ազատ է բացարձակապէս, կառա-ջարութիւնը առ այժմ չի համաձա-կիր ոտք կոխել հոն։ Սակայն խա-ղաղ միջոցներով ձեռք բերուած մի յաղթանակ է սա, որ տեւական չի կրնար ըլլալ։ Կուգայ գարուն ու իր հետ ամենայն հաւանականութեամբ կը բերէ ՍՈՒՐ ԵՒ ԱՐԻՒՆ։

Արիւնի թուականի նախընթաց օրերուն մէջ կը պտուխնք ուրիմն, Մահւան զոքսնչն է որ պիտի հնչէ-

ազատութեան աղաղակին միացած։ Արդեօք ճգնաժամի այս օրերուն, ազատ երկրի հայերը ի՞նչ գիւրք ըն-նել մտադիր են, Ամերիկահայերը պիտի ուզեն իրենց բեմական ճար-ճատուն վէճերը թողուլ ու ուժ սալ ազատութեան թատերաբեմին վրայ որոտացող հրացաններուն, 1903 թը-ւականը Սասունի կոտորածի տասնամ-կակն է։ Ու մեծ մարդապանը ան-գամ մըն ալ լրջալ կուզէ հայու ար-եան մէջ։

Ոճիր է անտարբեր մնալ հայրենի-քի սեռ խոզվորին, ահա վաղուան օրը, Շարժեցէք հայեր, այդ արիւնտոտ օրը, փոտքի թւականի, յաղթու-թեան օտնի փոխենք։ Մը... ԵՐԿԱԹ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Մանգումէ» կը գրէ. Ինչպէս յայտնի է, Երեւանի ե-ղեւնադատ տոճանին առջեւ քա-նի մը ականաւոր ուսու փաստա-բաններ պաշտպանած էին այն հոգեւորականներն ու աշխարհա-կանները, որոնք ամբաստանուած էին թէ շեն գործադրած Մայիսի օրէնքը։ Այս փաստարանները ի-րենց պորձը լրացնելէ ետք Ն. Ս. Օճու թիւն այցելած էին աչքէ անցնելու համար Էջմիածնի հո-գեւորական հնու թիւնները։ Ն. Ս. Օճու թիւն կաթողիկոսը իբրեւ ե-րախտագիտութիւն, շքեղ հացկե-րոյթ մը տուաւ և դրուատական բառերով գովեց անոն արդարա-սիրական ոգին։

Տփղիսէն եկած թղթակցու-թիւններ կը ծանուցանեն թէ, Ն. Ս. Օճու թիւն կաթողիկոսին կողմէ վերջին անգամ Չարին յրկուած գրութիւնը, կը խնդրէ մասնաւոր քննիչներու անուանումը, իբրեւ

Մայիսի օրէնքը անաստող եկե-ղեցականներուն և աշխարհական-ներուն վերագրուած ամբաստա-նութիւնները քննելու համար։

Ն. Ս. Օճու թեան այս գիրը իր արդիւնքը ունեցած է և երկու քննիչներ Տփղիս հասած են, Դարձեալ կ'ըսուի թէ Վեհ. Չարը հրաման ըրած է Կովկասի կառա-վարչապետին, որպէս զի գործա-դրութիւնները մեղմացուին և ե-կեղեցականներուն հետ խստու-թեամբ չվարուին։

Ս. Չարապետը հակառակ այս վ ըջին մտահոգութիւններուն, իր պաշտօնին պահանջումները կը գործադրէ, և յաճախ կը դիմէ կառավարութեան ու կը խնդրէ որ Հայ. Եկեղեցին պահէ իր հայ-րապետական իրաւունքները իու-սիւրջ մէջ և պահպանէ իր ստաց-ուած քննըը։ Այն ամբաստանեալ ները որոնք Մայիսի օրէնքին գործադրման առթիւ Տփղիսի մէջ բանտարկուած էին, իրենց ան-մեղութիւնը ապացուցուելով, ար-ձակուեցան։ Ասոնց մէջ են Տօքթ. Վարդազարեան և փաստաբան Սպանդար Սպանդարեան։

«Մշակ» վերսկսուած է հրա-տարակուիլ, «Նոր-Դար» զգու ոչ։ «Միլիտէն» մեզ կը գրեն, որ Պ. Սարգիս Գույումճեան Թննդեան տօնին առթիւ նուիրած Ազգային վարժարանի 7 աղքատ աշակերտ-ներուն համար ձմեռուան հա-գուստներ։

«Շապին» Գարահիսարի առաջ-նորդը 400 Ֆր հանքանակած է ի նպատակ տեղական վարժարանին։

«Պատրիարքը և եպիսկոպոս-ները ժողով մը ունեցեր են կով-կասահայ եկեղ. կալուածներու և Երուսաղէմի խնդրի մասին խոր-հրդածելու համար։

«Պուլկարիւյ» վախճանեալ Պատր. փոխանորդի լանջախաչը յանձնուած ըլլալով Վահան վար-դապետի, վերջինս հրաման խնդ-րեր է Պատրիարքէն ինքը կրճւ զայն և ստացեր է... Երեւի ի վարձատրութիւն իր Պուլկարա-հայ գաղութին հասուցած վնաս-ներուն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յանքովիստ Միթաքով երկար չէ որ սկսած է հրատարակել «Սօ-ֆիսքի Վէտոմոսթի» թերթը։

Մակեղ. Բ. Կոմիտէի նախկին նախագահ Միխայէլովսքի ալ ու-նի հիմա իր թերթը։ Այս երկու լրագիրները սկսած են անխնայ յարձակումներ գործել իշխան Ծէրտինանտի վրայ։ Միխայէլով-սքի վերջերս գրեց «Օֆիսի պա-լատական գաղտնիքները» վեր-նագրով յօդուած մը, որու հիման վրայ կառավարութիւնը իրեն դէմ այժմ դատ բացած է։

«Սօֆիսքի Վէտոմոսթի» մէջ նոյնպէս երեւեցաւ վերջերս իշ-խանը վիրաւորող յօդուած մը։ Երկու սպաններ ներքեւի և Վուի-չէվ յօդուածը առած կերթան խմբագրատուն և բառուցքներով կը ծծեն Միթաքովը։

«Պուլկար և թուրք կառավա-րութեանց յարաբերութիւնները պաղած են վերջերս, որովհետեւ իւրեքիս լիովին չէ կատարած իր ընդհ. ներման և ճանապար-հորդութեանց գիւրացման վերա-բերեալ խոտուածները։ Նաչովիշ կը ջանայ այս հարցերը կարգա-գրել։

«Ազգ. ժողովը ամսական 150 Ֆր. յատկահաւուցած է անցեալ ա-

ՄԹՆՃԱՂԻՆ
(Պատմութեամբ)
ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ
1
ԵՐԱՂՆԵՐ

— Սիւրիւնն ես չեմ վախնար — ա-ռաջ տարաւ դատարկապորտը — Սի-պերիան ալ Ռուսաստան է, այնտեղ, ինչպէս և այստեղ միեւնոյն Ցարն ու Աստուածն են, այնտեղ նոյն ուսու-բէնը կը խօսին ինչպէս ես ու զոս։ Միայն այնտեղ աւելի ազատութիւն կայ և մարդիկ աւելի հարուստ են։ Այնտղ ամէն բան լաւ է։ Հոն փսիսը օրին կի համար շատ աւելի գեղեցիկ են քան այստեղիները։ Ձուկ և վայրի անասուններ անթիւ կան։ Ինձ համար, եղբայրներ, ամե-նապատշաճ հաճոյքն է ձկնորսութիւ-նը։ Աւելի լաւ է ինձ հաց չ'ստա ու-նելու, սակայն թողնել կարծով նս-տիլ։ Աստուած վկայ ձուկ կը բռնեմ ամենահասարակ կարծով, երբ պէտք

է ուղիւն կը ձգեմ, իսկ երբ սառոյցը կը պատէ, այն ասեմ կորսում քա-կածեւ ցանցով, եթէ ուժս չի բաւէ այս վերջինով որսալ, այն ատեն գիւղացի մը կը վարձեմ հինգ կոպե-կով, եւ Աստուած իմ, ի՞նչ մեծ հա-ճոյք է առ ինձ համար։ Երբ մարդ ջրամալ մը կամ պիտակ խորածաւկ մը կը բռնէ, այնպէս կուգայ թէ հա-րազատ եղբայրը կը տեսնես անոր մէջ։ Մտածէ, խնդրեմ, որ իւրա-քանչիւր ձուկի համար առանձին խեղք պիտի բանեցնես, մէկին կենդանի ճճիով մը պիտի բռնես, միւսը թըր-թուրով, երրորդին գորտով կամ ձղ-րիթով։ Այս ամէնը պիտի գիտնաս։ Օ, ինչակի համար ջրամալի անունը տուի։ Չրամալը ընտրութիւն չի գնէր ան շերտիկի ալ կը կորչէ։ Գայ-լածուկը սակայն ճերմակ խորակա-ձուկ կուզէ։ Երբ յորդացած սահա-քին մէջ ջրամալը կը բռնեմ, շատ հաճոյք կը պատճառէ ինձ. կարծիւն թիւր մտաւորապէս քառասուն կան-դուն հետեւ կը նետես, առանց կա-պարի, ճնճուկ մը կամ ձղրիթ մը կապ. ծ, այնպէս որ անոնք ջրին վը-րայ լողան, և ինքը ալ առանց վը-րայ լողին մէջ կայնոտ կը մտաւ և կը թողուս որ յորձանքը թեւը տանի,

սակայն ջրամալը կը կորչէ, Բայց հոգ պէտք է տանիլ՝ որ ան իձածր կե-րը չը փախցնէ։ Կերէն բռնածին պէս, պէտք է որ թեւը քիւր քաշես և եր-կար չի տեսեր արդէն ան քեզ մտէ։ Սարափելի քանակութեամբ ձուկեր բռնած եմ ես ֓արսուսի ժամանակ, երբ ընկերներս անտ ոի մէջ կը քը-նանային, ես որ քուն չունէի գե-տեգիրք կերթայի, Գետերը սակայն լայն են, յորձանքոտ, եզերքները սը-ըրնթաց, սարափելի բան։ Եզերքները ծածկուած միայն նախնական անտա-ներ ծածկերն այնպէս են, որ երբ մարդ վեր նայի խեղքը կը պտտի։ Այս-տեղի գիւղերով հաշուած ամէն մէկ ե-ղեին տասն ըուպլի արժէ։»

Ուսունի խուռն երազներու մէջ, անցեալի գեղեցիկ պատկերները և նախազգացումը հեռաւոր երջանկու-թեան թմրեցուցին արգաստեղի մար-գուկը, շրթները միայն կը դողողողա-յին, կարծես ինքն իրեն հետ կը շա-րունակէր խօսիլ։ Մաշուած, երջա-նիկ փայտը երեսն չէր հեռանար։ Ուտիկանները լսեցին։ Անոնք գը-լուխին կախած խորատու գլուած էին մտած մուռններու մէջ, Աշնանային այս լուսութեան մէջ, երբ ցուրտը, թափանցող մառախուղը հոգին վրայէն

մարդուս հոգիին վրայ կ'իջնէ, երբ ան բանտի մը պարսպի նման աչքեղ առջին է միտում և կը վկայէ մար-դուս կամքին սահմանափակութիւնը, այն ատեն քաղցր է, լայն ու սրնիւտաց յորձանքներու, սգատ, սեպածե ե-զերքներու, անմատոյց անտառներու և անսահման դաշտաւայրերու մա-սին մտածելը, Երեւակայութիւնը կ'ըսկսի գանդալ և հանդարտ շկա-րել, թէ ինչպէս մարդը կէտի մը շափ պղտիկ է, առաւօտուն կանուխ, երբ ան երկնքի վրայ դեռ առաջին կարմ-րութիւնը չ'տնհետացած անրանկ սե-պացեալ եզերքներու երկարութեամբ կը քալէ, գարեւոր ուղղաբերձ եղեւ-նիները գարատափի ձեւով հոսանքի երկու կողմերը կ'աշտարակուին ու կը նային սգատ մարդուն վրայ և քաղցր կը սօսեն։ Արմատները, հսկայա-կան ժայռերը և փշոտ մացառները կը գոցեն մարդուս ճանապարհը, բայց ան մարմնով ուժեղ է և հազիվ քալ, ան ո'չ եղեւիններէն կը վախնայ, ո'չ ժայռերէն, ո'չ իր միայնութեանէն և ո'չ ալ եկող արձագանքներն, որք ի բաքանչիւր քայլափոխին կը կրկն-նուին։

(Շարունակելի)

մառ ծովուն մէջ խելզուող ելեւ-
մտից նախարար Մանուշէվի մօրը:
— Իշխանը անցեալ երկուշաբ-
աի այցելելով Ազգ. ժողովը կար-
գացած է իր գահաճառը, որուն
մէջ արտաբերին քաղաքականու-
թեան մասին խօսք չկայ և միայն
կը շօշափէ ներքին հարցեր, զո-
րքս պիտի նպաստեն երկրի տըն-
տեսական և քաղաքակրթական
յառաջդիմութեան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԾԱՅՐԱԿՈՅՆ ԱՐԵՒԵԼԿ

Հասած չոր հեռագիրներուն
նայելով ինչուած են սուս ճարո
նական յարաբերութիւնները և
դեսպանները մեկնած:

— Ինթերսպուրկի պաշտօնա-
թերթը հրատարակած է հետեւե-
տալ շրջաբերականը. որ արտա-
քին գործոց նախարարը Լամս-
տօրֆ ուղղած է արտասահմանի
ուս գիւղատնտեսական ներկայա-
ցուցիչներուն:

«Ինթերսպուրկի ճարտական
դեսպանը ուսական կառավարու-
թեան ներկայացուց իր կառա-
վարութեան մէկ իշատակագիրը,
որուն մէջ կը յայտարարուի թէ
ճարտական կառավարութիւնը կը
խզէ իր յարաբերութիւնները և
Ինթերսպուրկէն ետ կը կանչէ
իր ներկայացուցիչը հանգերձ
դեսպանատան պաշտօններով,
Ասոր վրայ կայսրը հրամայեց, որ
Խօքիօյի կայսերական ներկա-
յացուցիչը իր հետեւորդներով
անմիջապէս ձգէ ճարտական
մայրաքաղաքը: Այս քայլը որ
կառնուի առանց ուս կառավար-
ութեան տալիք պատասխանին
սպասելու, ճարտական պատաս-
խանատու կը կացուցանէ յարա-
բերութեանց խզումէն առաջացող
բոլոր հետեւանքներուն համար»

— Ռուսիա զրկած է իր պատաս-
խանը, որու մէջ ան ջանացած է
կարելի եղածին չափ գահացնել
ճարտական կառավարութիւնը և
խուսափել պատերազմի մը վը-
տանգէն: Այսուհանդերձ ամե-
րիկեան և անգլիական դիւանա-
գրտական շրջաններու մէջ պա-
տերազմը անխուսափելի կը նը-
կատուի և օրըստօրէ կը սպասուի,
որ շինական ծովերուն մէջ որո-
տան թշնամիներու թնկանթի-
նները:

— Վլադիվոստօքի մէջ մեծ ի-
րարանցում մը տեղի ունեցած է:
1500 ճարտարի իրենց խանութ-
ները, ապրանքները ևն ծախս-
ելով ձգած են ուսական հողը և
նաւերով ճարտար փոխադրուած:
Այս քայլը անոնք առած են
ճարտար կառավարութեան մէկ
զաղանի հրահանգին համեմատ-
ինչպէս կը կարծուի:

— Բօրթի Արթուր հասած է ուս-

սական Քոլան զրահաւորը 1800
զօրքով:

— Սէուլի մէջ ուս զինուորնե-
րը առեւանգած են շատ մը տե-
ղացի կիներ և այսպէսով իրենց
դէմ զրգուած տեղացի ժողովուր-
դը:

— Եւանջիլքայ և պատերազ
մական նախարարը կայսեր խն-
դիրք մատուցեր են, որ Չինաս-
տանը ճարտարի հետ նիզակակ-
ցի և Մանչուրիոն փրկէ ուսե-
րու ձեռքէն: Չինական մամուլը
այս առաջարկին ջերմ պաշտպան
կը հանդիսանայ:

— Ճարտար յարաբերութիւն-
ները խղած է տեսնելով, որ
Ռուսիա երեք շաբաթէ ի վեր
զինքը ի զուր պատասխանի սպա-
սեցնել առաւել միջոցին պա-
տերազմական պատրաստութիւն-
ներ տեսնելու համար:

— Մոսկուայէն ծայրագոյն ա-
րեւելք մեկնած են 4 զօրագուն-
տեր:

— Յարը շուտով կը ճանապար
հորդէ դէպի Մոսկուա: Մայրա-
քաղաքին մէջ կը տիրէ լուրջ
գրուածիւն:

Ստէսայի և քիէվի զօրքերը
զէնքի տակ կանչուած են:

— Պատերազմի պարագային Ռու-
սիոյ զօրաց թիւը ճարտէն աւելի
պիտի ըլլայ: Իսկ ճարտար թըն-
դանթաձիգ ոյժը պիտի գերա-
զանցէ ուսերունը:

Ճարտական նաւատորմի դը ու-
նի 150 զրահաւորներ, որոնց
մէջ կը գտնուին 135 ծանր, 430
միջին և 250 արագաձիք թնդա-
նօթներ:

Փոխադրութեան համար պիտի
գործածուին առեւտրական նա-
ւեր, որոնք 8 օրուան մէջ կա-
րող են 30,000 մարդ փոխադրել
հանդերձ թնդանթներով և ձի-
երով, իսկ 14 օրուան մէջ
60,000 մարդ: Հիմա արդէն պատ-
րաստ 70 նաւեր և կըսպասեն հը-
րամանի զօրքը փոխադրելու հա-
մար:

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռ. Գոռը երկու պետութեանց
գեոպոլիտիկայի հարցում է ըլ-
լալիք բարենորոգումներու մասին
իր դիտարկութիւնները, որմէ Չը-
նովիւզ և Պարոնֆօն Գալիչէ գոհ
չեն մնացած: Անոնք կը պատ-
րաստուին նոր դիմումներ ընել:
Շարունակ դիմումներ և պա-
տասխաններ, իսկ Մակեդոնիոյ
գրութիւնը կը մնայ նոյնը:

— Անգլիոյ թագաւորին գահա-
ճառը և Լօրտ Լէնտասունի լա-
ցատրութիւնը, թէ անգլիա իրեն
կը վերապահէ իր զինուորու ան-
յաջողութեան հանդիպելու պա-
րագային, պահանջել աւելի ըն-
դարձակ բարեկարգութիւններ,
անհանգստացուցած է Եւրոպը:
— Թիւրք պաշտօնական շրջան-

ներ լուր ստացած են, թէ Պօրիս
Սարաֆով 8000 հրացան գնած է
Իտալիոյ մէջ և կը պատրաստուի
գարնան նոր խումբերով երկիր
մտնել և թէ խումբերը կը գըտ-
նուին Պուլկարիոյ մէջ:

ՍԵՐՊԻԱ

Նախարարական տաղնապը կը
մտածնայ իր վերջարանին:
Ընդդիմադիր կուսակցութիւն-
ները կ'ուզեն համաձայնութեան
մը հանդիմ:

ՆԱՄՍԿ ՎԱՆԷՆ

Քուրտերն ու Քուրքերը ամ-
բողջովին զբաղուած են այսօր հայ
յիզափոխականներով — «Ի՞նչ կը-
նեն ասոնք և ի՞նչ պիտի ընեն...»
Սարսափը շատնալով կը տարած-
ուի ամէն կողմ, ամէն օր կը լըս-
ուի յիզափոխականներու նորա-
նոր կռիւներու մասին: Քուրտը
քուն չունի, թուրք կառավարու-
թիւնը զանոնք կը մխիթարէ ստա-
յող հեռագիրներով, իսկ ինքն
ալ զողորջալով կ'անցնէ այս օ-
րերը — «Ի՞նչ պիտի ընեն, եթէ
այս կեանքները մեզ մօտ ալ ե-
րեւան» — կը կրկնեն թուրք և
Քուրտ պաշտօնեաները սարսա-
փած:

Տարբեր ձեւերով կը պատմեն
Բասնիի դէպքը, ամէն տեղ տը-
պաւորութիւնը մեծ է թուրքնե-
րու և Քուրտերու վրայ: Կ'ըսեն
թէ Իէլլի-Պոպայի մօտ 36 յիզա-
փոխականներն են մտած, թշնա-
մին մօտ 500 հողի է կորսնցու-
ցեր: Լուր է տարածուած այժմ,
թէ փէտայիները պայքար են ըս-
կան Մանագիկերտի, Քորթուի և
Իերջանի շրջակայքը: Կ'ըսեն
նաեւ թէ ուրիշ բազմաթիւ ֆէ-
տայիներ կը գտնուին ուրիշ կող-
մեր... Միտիւլմանները այս լու-
րերը լսելով սարսափի մէջ են,
անոնք, արդէն առանց ասոր ալ
չստ վախցած են Մակեդոնիոյ
գործերէն...
(Pro Արմենիա)

ՆԲԵՂ ՆԵՐԿՅԱՅՈՒՄ

Փետրվար 5-ին հինգ շաբթի ե-
րեկոյեան մամը Ցուկէսիւն Պանթ-
րալ՝ թատրոնին մէջ:

Ա.

Վ. ՄԱՄԻԿՈՆԵՆ ԵՆ

սղբերգութիւն 3 արարուածով
Բ.

Կենդանի պատկերներ

Միջոցներուն պիտի նուագէ
«Սոխակ» նուագախումբը:

Լաւ տեղ զլաւել ուղողները
թող փութան տոմսերը օր առաջ
գնել:

«Սիրողներու խումբ»

Ա Ձ Դ

Ամերիկայի իր հայրենակիցներուն
կողմէ կը փնտրուի Նշան Ղազարեան,
Թէրճանի Չինոնց գիւղէն:
Գրել խմբագրութեանս:

Բացուած է 1904ի Բաժանոր-
գագրութիւն

«ՄՈՒՂ»

Գրական, Հասարակական և
Քաղաքական Հանգէտի:

«ՄՈՒՂ» հանգէտը, որ երեք տա-
րիէ ի վեր կը հրատարակուի նոր
խմբագրութեան մը կողմէ և այնա-
տակցութեամբ ուսաստան և թիւքա-
հայ ամենալաւ պրագմաներու, Հայոց
միակ լուրջ ու երազակալ խմբագր
հանգէտն է այսօր: Իւրաքանչիւր ամիս
լոյս կը տեսնէ 250 — 300 էջերէ բազ-
կացած մեծադիր հատոր մը, հետեւեալ
թիւներով:

- 1. Վէպեր, պատմուածքներ, թատ-
րերգութիւններ. 2. Բանաստեղծու-
թիւններ. 3. Գրական, պատմական և
հրապարակախօսական յօդուածներ.
4. Գննադատութիւն և Մասնախօս-
ութիւն. 5. Նորութիւններ հայ և
օտար գրականութիւններէ. 6. Գիտու-
թեան, գեղարուեստի և արհեստա-
գիտութեան աշխարհէն. 7. Տնտեսա-
կան հարցեր. 8. Ներքին սեսութիւն.
9. Գաւառական կեանք. 10. Արտա-
քին սեսութիւն. 11. Նամակներ
արտասահմանէն. 12. Պարբերական
հրատարակութիւններ. 13. Յաւել-
ուած վէպ մը. 14. Յայտարարութիւն-
ներ ամէն լիզոյ:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Արտասահմանի համար տարեկան
32 ֆր. կես տարին 18 ֆր. ամսական
3 1/2 ֆր.

Բաժանորդը պիտի փափաքողները
թո՛ղ զիմեն հետեւեալ հասցէին,
կաւիտիկ իրկելով բաժնեկիցը:

H. AGHASSER Weinbergerstr,
103II Zürich (Suisse) 6-8

ԿԱՐԵՒԻՐ ԱՁԴ

Ճարտարգէտու Համար

Նախկին Օթէլ Ռոտօփի և այս
ամառ Հիսարի մէջ Օթէլ Պուլկարի
վարձակալ Աստիկ Սրապիան, այժմ
բացած է պանդոկ մը Ֆիլիպէի Միւ
փողոցին վրայ:

ՕԹԷՂ ՍԱՆԹՐԱԼ

Անուամր: Յաճախողները գոհ
պիտի մնան մաքրութենէն և արագ
ծառայութենէն:

Տնօրէն

Ասիկ Սրապիան

6 Նոյեմբեր, 1903
Ֆիլիպէ 41-42

Է. ԱԿՈՒՂԻ

ԿՈՎԿԱՍՏԱՆՆ ԿԵՐԿԵՐ»

Գին 3 ֆր. 20 սթ.

Գնելու համար դիմել Վառնա Բար
կէն Սիւնի ընթացարանին վար-
չութեան: Ճանապարհածախսը
գնողին վրայ է: Դրամը կանխիկ
վճարելի:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна